

երիխային հաւանութենէն վերջը կը մը-
կըրտէին զինքը երեք անգամ ընկղմամբ:

Մկրտութենէն վերջ կը կատարէին Դը-
րոշմի սուրբ խորհուրդը ճծմամբ, և յետոյ
կար սովորոյթ՝ որ նոր դրոշմաւնեւորուն
ոտքերը կը լուանային: Նորադարձը աւա-
զանէն ելլելէն վերջը կը զգնեւոր սպիտակ,
կը մտնէր եկեղեցի և կը հաղորդուէր երկու
տեսակով ինչպէս ամէն հաւատացեալ-
ները: Նորակնիք փոքր տղաքը կը հաղոր-
դէին սուրբ մարմնոյ մասնիկը թաթաւելով:
Հոովմ և Արեւելք Ս. Հաղորդութեան ճա-
շակմանէն վերջը նորադարձին կ'ընծայուէր
ջուր, կաթ և մեղր: Ութ օր նոր հաւա-
տացեալը կ'ուսանէր Պատարագի Ս. Խոր-
հուրդը և այլ կարևոր հաւատալիքները,
և իրեն համար այդ օրերը կը մատուցուէր
Մկրտելոց Պատարագը, ութերորդ օրը կը
հանէին սպիտակ զգեստին:

Կանոն պատկի մէջ յիշատակելի է օրհ-
նութիւն ամուսնական քողին (Hammœum
nuptiale), որ քահանայական օրհնու-
թեամբ կ'ըլլար (cum ipsum conjugium
velamine et benedictione sanctificari
oporteat): Արեւելք կէս դար առաջ քողքել
հարսը՝ սովորական էր նշոյ իսկ քաղաք-
ներու մէջ, և կը զործածէին վառը՝ երեսի
բարակ ծածկոյթը՝ գոնէ տարի մը՝ իրենց
կենսայրիւն և կենսով առաջ:

Թաղման սգահանդէսը կը կատարուէր
պատարագով և նշնեցեալը կը յուզարկէին
բաց երեսով և վերջին համոյր մը տալով
ըստ Յունաց, Հոգեհանգստեան օրերն էին
արեւելեայց մէջ սովորաբար երրորդ, ին-
ներորդ և քառաններորդ օրերը. արեւմ-
տեայց մէջ էր երրորդ, եօթներորդ և երես-
ներորդ օրը, իսկ Ս. Արքրոսիոս կատարեց
եղբօրը համար եօթներորդ և քառաններորդ
օրը: Ս. Արքրոսիոս արգիլեց սրբոց դա-
բանաց վրայ զետեղելը կերակուր, հաց
և զինի, ինչ որ սովորոյթ էր Ափրիկէի քրիս-
տոնէից մէջ:

Ամբոսեան Միսարանն ունի տարբերու-
թիւններ Հոովմեականէն՝ ձեռնադրութեանց
և այլ սուրբ խորհրդոց ազօթից և արա-
րողութեանց մէջ. ունի օրհնութիւններ

հացի և այլ իրաց համար, ինչպէս նաև
զատկական գառին (Benedictio super
agnum in Pascha):

Ուսումնասիրողը Ամբոսեան արարողու-
թեանց վրայ բազմաթիւ են, աւելի հե-
տևող եղայ համառօտ տեսութեանցս մէջ
(Պօղոս Լէժէյ (Paul Léjay):

Ո. Կ.

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՔ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շար. տես Բազմ. 1926, էջ 48)

ԻՄԵ.

ԲԺՇԿԱՐԱՆ ՏԱՃԿԵՐԷՆ

1442 Թուահամարը կրող այս Ձեռա-
գիրը հայերէն տառերով Թուրքերէն զը-
րուած մ'է թէև, բայց միջանկեալ տեղեր
գուտ հայերէնով կտորներ ալ կան: Այդ-
տովմաթի (ճշտա յժ-կոթեան երկրորդ մա-
սին, այսինքն դեղաբանութեան թարգմա-
նութիւնն է:

29 հր. մեղր մեծութեամբ, 28 հր. մեղր
լայնութեամբ, և 1,5 հր. մեղր թան-
ձրութեամբ հատոր մ'է, լաւ կազմուած,
Թուրքիստան սովորական, գիրը տեղի նոսր,
զրութիւնը ամէն մէկ էջի վրայ երկսիւն,
ընդ ամէնը 245 էջ և 123 թերթ:

Որ և է արժէք ներկայացնող գործ մը
չէ, միայն 201 էջէն կ'ուսանինք թէ դար
մը առաջ 2 անի պատկանած է՝ ԽՈՒԿԱՍ ՃԱ-
ՆԻԿԵԱՆ անձին, որ կը գրէ:

« ԵՎԵՐԱ յոյսի 1 խնայ ներքինարան գիրքըս
« Ճանիկոնց Գեվորդի աղայի որդիք տնօրէին
« Վէ խոկասին և, աստուած բարի վայել
« տայ, ամեն գիր գրած բոլոր օրարախ հա-
« բոյր քսան և իրեք հատ և իրեք բոլոր ալ
« պօշ կայ. եղան ամենքն հարաւոր քսան և վեց
« բոխտ այսպէս և յմանքն տեսողաց հա-
« ձնյիցի:

« Իրտայ տեսան

« Խոկաս

« Ճանիկեան

Սոյն թուականը տաճկական է, և կը համապատասխանէ զրիթէ 1820 թուականին:

*
* *

Բացի սոյն Յիշատակարանէն, հատորին վերջին էջին վրայ ալ կայ զրութին մը, որ կը տեղեկացնէ մեզ, թէ ձեռագիրս յետոյ վերաբերած է Կիւրեղ անուն անձի մը, որ հաւանաբար բժշկութեամբ կը զբաղէր, զի կը գրէ.

« ۱۷۷۱ րմպ. Կ ին, որ և հայոց ամսուն « յունիսի ԿՎ ին և մինչև յուլիս Վ ին ատորց « տաք օրերն այս ներգրիսի կրնք անձիկքս « սաստիկ հիստա եղան, ընցա բերրիպներս « տեղս զիքր ըրի Կիւրեղս »:

Այս 1261 թուականն ալ տաճկական է և կը համապատասխանէ վերի ի վերոյ՝ 1843 թուականին, և այդ ատեն է որ Կիւրեղ կը բժշկէր, դատելով իւր «տված բերրիպներս» բառերէն, որով՝ տուած դեղերը ըսել կ'ուզէ և կ'արձանագրէ զանոնք, զորս տեսլորդ կը համարիմ ընդօրինակել:

ԾԶ.

ԲԱՌԹ ԳԱՂԻԱՆՈՍԻ ԲԺՇԿԱՊԵՏԻՆ

Մեր նախնեաց կարգ մը փոքրիկ զբուռածները պարունակող և 680 թուահամարը կրող ձեռագիր հաւաքածոյի մը մէջ կը գտնուի: Այս ալ ընդօրինակած է Հ. Արսէն Անթիմոսեան, (որ է մեծն Բազրատունի), երբ Պարիս գտնուած է:

Ըստ այսմ՝ Զեռագրին առաջին էջին վրայ կը կարդանք.

ՀԱՒԱԹՈՒՄԸ ԶԱՆԱԶԱՆ ԲԱՆԻՅ ՆԱԽԵՆԱՅ
գտնալ և ժողովհալ յայլ և այլ զբաղարաց արքունի գրառոցին փարիզոս, և օրինակեալ 'ի նմին ջաղաքի, յամի 1824 և 1825:

Իսկ 1857դ. էջին վրայ ալ հետեւեալը.
« Հ. Արսէն Անթիմոսեան գտնալ զայս ամե-

« հայն արձանագրիս և յիշատակարանս 'ի « փարիզ մայր ջաղաքաց. գաղղիացոց ցա-
« դափարեաց զդոսա զգոռոքեամբ... 'ի « 1825 յունուարի 15 »:

*
* *

Գաղղիանոսի բառերը՝ ըստ կարգի՝ 20րդն է Հ. Արսէնի ընդօրինակութիւններուն, և կը զրաւեն հատորին 189—194 էջերը: Պարիզի Ազգ. Մատենադարանին սոյն գործը ես ալ յիշատակած եմ 1889ին, երբ այն տեղ գտնուած բոլոր հայ բժշկարանները կ'ուսումնասիրէի՝ երկու օրինակ կայ հոն, մին՝ (ՁԱ) 1282ին Գուքարաց աշխարհի Մականաքերդ կոչուած անտառին վանքը ընդօրինակուած ձեռագրի մը մէջ զրուած է, միւսը՝ 1597ին ընդօրինակուած հատորի մը մէջ: Ասոնց առաջինը մինչև Գ զրին ունի, իսկ երկրորդը մինչև Ո:

Հ. Բազրատունի այս վերջինէն կատարած է իւր ընդօրինակութիւնը, զոր ամբողջովին արտաստպել պիտի ուզէի՝ եթէ պակասատը չըլլար:

Բոյսերու, դեղերու, մարդկային մարմնի այլ և այլ մասերու անուններն ունի Գաղղիանոսի այս բառերու հաւաքածոն, անոնք տեղ տեղ Յունարէն են, տեղ տեղ ալ Լատիններէն, մերթ ալ Արապերէն, առանց մեկին բացատրութիւններ ունենալու իրենց ըովը:

Ըստ Նորայր Բիւզանդացիի 12րդ Գալու թարգմանութիւն եղած պէտք է ըլլայ այս, բայց առեւտը տակի ընդարձակ էր այն և ընկերացած՝ ճոխ մեկնութիւններով:

Արգեօք Գագիկի բժշկարանին մէջ զետնուած բառացանկին և Գաղղիանոսի բառերուն միջև ազերս մը կարելի չէ՝ ենթադրել:

Բոլոր հայ բժշկարաններու մէջ զետնուած բառակարգութիւնները մեծ մասամբ « ԲԱՌԹ ԳԱՂԻԱՆՈՍԻ » ին հետևողութեամբ յօրինուած են: Առաջին ատթիւ որ ամբողջական ու ընտրեւագոյն օրինակի մը հանդիպում պիտի ուզէի հրատարակել զայն, հետը ծանօթագրութիւններ գրելով:

1. — «ԱՐԵՒԷԼ» Կ. Պոլսոյ Զ. տարի, Թի. 1733, 4 Նոյեմ. 1889.

ՄԷ. և ՄԸ.

ԲՆԱԶՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԵՌՆԱԶՆՆՈՒԹԻՒՆ

Երկու օրինակ ունի Վանքը այս Զեռագրին, մին կը կրէ 34 թուահամարը, միւրը 933 թուահամարը:

Առաջինը փոքրագիր կաշէկազմ հատոր մ'է, ունի 19 հր. մեղր մեծութիւն, 12 հր. մեղր լայնութիւն և 2,5 հր. մեղր թանձրութիւն, կը բաղկանայ 122 թերթէ, 244 էջ գրութեամբ, որ նոսր է, խիստ մաքուր և միասին՝ բամբակեայ հաստ թուղթի վրայ:

Երկրորդը՝ մեծագիր հաստ կաշէկազմ, լճապահուած, որ ունի 31,5 հր. մեղր մեծութիւն, 20,5 հր. մեղր լայնութիւն և 1,5 հր. մեղր թանձրութիւն. կը բաղկանայ 47 թերթէ 94 էջ գրութեամբ, որ նոսր է, մաքուր և երկսին, հաստ բամբակեայ թուղթի վրայ:

Երկու ձեռագրին գիրերը այնչափ համանման են՝ որ միեւնոյն գրչի արդիւնք կարելի է համարել զանոնք:

Առաջինն ունի Յիշատակարաններ, իսկ երկրորդը բնաւ, որով բաւ կը համարիմ գիտել միայն առաջինը, և խօսիլ անոր պարունակութեանը վրայ, որով երկրորդն ալ վրիպած չըլլար մեր ուսումնասիրութեան:

Ուստի այս հատորին առաջին էջին վրայ գրուած տեղերէն կ'իմանանք, թէ ձեռագիրն թարգմանութիւն է՝ Ճօան Պարթիստա փռութայնօ իտալ. հեղինակին աշխատութեան, և թարգմանիչն եղած է Յօհաննէս վարդապետ Կ. Պօլսեցի:

Թարգմանութիւնը կատարուած է 1621 օգոստոսի 25 ին, Հոռոմի մէջ՝ ինչպէս կը յայտնէ Յիշատակարանը, որ է այսպէս.

Բնազննութիւն բոլորի մարմնոյ
մարդկայնոյ

Արտադրեցեալ 'ի Ճօան Պարթիստայէ փոքրայնոյ, և համապատեցեալ 'ի Յսանէյսկոսէ Ըստկոյրոյ:

Թարգմանեցեալ իսկ՝ 'ի Յօհաննէսէ վարդապետէ կոստանդնուպոլսեցոյ, 'ի գոարձոյրիս Հայկազանեաց:

Ըստ խնդրոյ՝ Պարոն Գասպարի որդոյ՝ Խօսայ Սահրատի, 'ի յիշատակ անձին խոյ, և հոգոյ ծնողաց խորոց, և 'ի վայելումն շնտանեաց երթին, 'ի փաստ մեծացոյն Այ:

Յամի Փրկչին 1621 օգոստոսի 25:
ի Մեծն Հոռոմ. հրամանաւ Սր. Ժողովոյն:

և այս Զեռագրին ընդօրինակողն ալ երկու տեղ կ'արձանագրէ իւր Յիշատակութիւնը, հետեւեալ կերպով. նախ 202րդ էջին վրայ՝

« Յամի Տն. 1772, Ն'ամսեանն Հոկտեմբերի 14, Գրեցաւ Զեռամբ Ստեփանն. « ետսի Քարտուղարի կոստանդնուպոլսեցոյ, և ապա՝ 244 էջին վրայ ըսելով.

« փառք անբաժանելի Ամենասուրբ Եր. « յորդորեան Հօր և որդոյ՝ և հոգոյն Սրյ. « անսպառ յափտեցիս Ամեն.

Եղբորցաւ այս մատնանս քարեխօսութեամբ տիրածին միշտ կոսիսն Ամեծօրհնեցեոյն Մարիամն ձեռամբ Ստեփաննոս Քարտուղարի կոստանդնուպոլսեցոյ:

Յամի Յափտեական ամենափրկչին մեռոյ 1772, Ն'ամսեանն Հոկտեմբերի 24:

ՏՕԳԹ. ՎԱՆԸՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ
(Շարունակելի)

ԲՆԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ ԵԶՆԻԿԻ ՄԱՍԻՆ

(I. Մարիէսի աշխատութեան առթիւ)

(Շար. տես բազմ. 1926 էջ 12)

Եղծը թուում է որ խնամութեան թելերով կապուած է նաև Բարսեղ կեսարացու վեցօրեայքի հայերէն թարգմանութեան և Լուսաւորչին վերագրած Յաճախապատահին: Հայ մատենագրութեան պատմութեան տեւսակէտից առանձնապէս կարեւոր են Եղծիկի հայ աղբիւրները, այն զրական գործերը